

Ն. Մ. ՏՈԿԱՐՍԿԻ

1917 թ. դեկտեմբերի 20-ին, 85-ամյա տարիքում, վախճանվեց նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկին, մի գիտնական, որի անունը սերտորեն կապված է հայ ճարտարապետության պատմության հետազոտությունների հետ և որը մեծ ավանդ ներդրեց հայագիտության այդ բնագավառում:

Ն. Մ. Տոկարսկին ծնվել է Պետերբուրգում, 1892 թ. դեկտեմբերի 18-ին: Միջնակարգ կրթությունն ստացել է տեղի սեփական ուսումնարանում: 1910 թ. ընդունվելով Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը, սովորել է ընդմիջումներով և այն ավարտել միայն 1926 թ.:


Նրան բախտ վիճակվեց Հայաստանի հնավայրերին ծանոթանալ ավելի քան վաթսուն տարի առաջ, երբ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գորակույժված լինելով ցարական բանակ, եկավ Կովկասյան ռակատ:

1915 թ. որպես սանիտար աշխատելով պատմական Տայք նահանգի Իշիան գյուղում գտնվող կարմիր խաչի ճակատային գործասում, իր ազատ ժամերին չափազրում ու նկարում է Բշխանի տաճարը: Հաջորդ տարվա վաղ գարնանը Թիֆլիսում նրան ծանոթացնում են Անիի հնագիտական արշավախմբի ղեկավար Ն. Մառի հետ: Տեսնելով սկսնակ հետազոտողի նյութերը, նա խրախուսում է Տոկարսկուն և հրավիրում մասնակցելու Անիի հնագիտական արշավախմբի աշխատանքներին: 1916 թ. ամռանը, որպես ճարտարապետ, նա աշխատում է Անիում: Կատարելով արշավախմբի ղեկավարի հանձնարարությունը, Տոկարսկին դրադավում էր քաղաքի տեղահանությունը, մի քանի հուշարձանների (այդ թվում 1911 թ. պեղված եկեղեցու) չափազրությունները: Արշավախմբի կազմում էր նաև այն տարիներին դեռ երիտասարդ, բայց արդեն իրեն լավագույն ձևով դրսևորած Հ. Օրբելին՝ Ն. Մառի «աջ ձեռքը», որը հետագա բոլոր տարիներին մնաց Տոկարսկու լավագույն բարեկամը, ղեկավարն ու խորհրդատուն:

Վերադառնալով Պետերբուրգ, Տոկարսկին Մառի հրավերով ընդգրկվում է հայագիտական խմբում, իսկ 1921 թ. դեկտեմբերից որպես գիտաշխատող ընդունվում է Նյութական մշակույթի նորաստեղծ պետական ակադեմիան:

1923 թ. նա հետազոտական ճանապարհորդություն է կատարում Հայաստանում, որի արդյունքները 1925 թ. հրատարակում է «Նախնական հաշվետվություն 1923 թ. աշնանը Հայաստան կատարած ուղևորության մասին» հաղորդման մեջ: Այդ հաշվետվությունը, որում հեղի-

նակը նախնական հետազոտության էր ենթարկել հայ ճարտարապետության մի քանի կարեւոր հուշարձաններ (Ավանի, Պտղնիի, Բյնիի և Նորադուլի եկեղեցիները, Հայրավանքի ու Սեվանա կղզու վանքերը), հանդիսացավ նրա առաջին ներդրումը հայ մոզոգրֆի ճարտարա-



պետական ժառանգության ուսումնասիրման գործում:

1924 թ. Տոկարսկին ընդգրկվում է այն արշավախմբի կազմում, որը ռուս նշանավոր հնագետ Բ. Վ. Ֆսրմակովսկու գլխավորությամբ Սև ծովի հյուսիսային ափի անտիկ շրջանի կենտրոններից մեկում՝ Օլվիայում հնագիտական պեղումներ էր կատարում: Ուրալում եղած ժամանակ նա հայտնաբերեց ու էրմիտաժին հանձնեց անհատ ճանապարհով այս հեռու տեղերը հասած Կիլիկյան Հայաստանի արժանի մի գավաթ:

1930-ական թթ. երկրորդ կեսին, որպես Պետական էրմիտաժի և ՍՍՀՄ ԳԱ նյութական մշակույթի ինստիտուտի աշխատակից Տոկարսկին մի քանի անգամ Սովետական Հայաստան է գալիս: Այստեղ նա ղեկավարում է Ախթալայի և Հովհաննավանքի հուշարձանների ամրացման և նորոգման աշխատանքները: 1936 թ. ամռանը Հ. Օրբելու գլխավորած հնագիտական արշավախմբի կազմում նա որպես նարտարապետ մասնակցում է միջնադարյան Ամրերգի հնագիտական պեղումների աշխատանքներին, կատարում ամրոցի տեղահանությունը և հուշարձանների չափազրությունը, իսկ

հետագա տարիներին մասնակցում է Դվինի և Կարմիր բլուրի պեղումներին:

1941 թ. ապրիլին Տոկարսկին ստանձնում է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնը, որը վարում է մինչև 1945 թ. ապրիլ ամիսը:

Կոմիտեում աշխատելու տարիներին Տոկարսկին ավելի մոտ ծանոթացավ հայ ճարտարապետության գանձերին, առավել խորամուխ եղավ նրանց բազմակողմանի հետազոտման գործում: Պատերազմի տարիներին էլ, 1944 թ. ն. Տոկարսկին զինվորագրվում է կոմունիստական կուսակցությանը:

1945 թ. փոխադրվելով Հայկական ՍՍՀ նորաստեղծ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը, տարիների ընթացքում կատարած հետազոտությունների իր արդյունքները Տոկարսկին ամփոփեց «Հին Հայաստանի ճարտարապետությունը» սովորածավալ մենագրության մեջ (1946 թ.):

Վերադառնալով Լենինգրադ և որպես դոցենտ աշխատելով Մուխինայի անվան Գեղարվեստաարդյունարերական բարձրագույն ուսումնարանում, իսկ այնուհետև, 1952 թ. որպես ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թանգարանի դիրեկտոր, նա շրջաբերեց զբաղվել հայ ճարտարապետության պատմության հարցերի ուսումնասիրությամբ:

1957—1963 թթ. անխոնջ գիտնականին մենք նորից տեսնում ենք Հայաստանում: Զբվեժում և Ողջաբերդում նա համառորեն որոնում և պեղումներով հայտնաբերում է հայ ճարտարապետության մինչ այդ անհայտ հուշարձաններ: Որպես արդյունք լույս են տեսնում երկու մենագրություններ («Զբվեժ», 1959 թ., «Զբվեժ և Ողջաբերդ», 1964 թ.): Զուգահեռաբար այդ տարիներին նա կարողացավ իրականացնել իր վաղեմի իղձը՝ նոր հետազոտությունների տվյալներով լրացված և վերախմբագրված հրատարակելի իր մենագրությունը՝ «Հայաստանի IV—XIV դդ. ճարտարապետությունը» (1961 թ.): Հիշյալ մենագրության համար նա 1962 թ. արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան ստացավ:

1963 թ. ամռանը, 71-ամյա ծերունին նորից բարձրանում է Արագածի լանջերը: Ամբերդի վերաբերյալ նրա հետազոտությունը լույս տեսավ ինչպես առանձին գրքով Խտալիայում (հայ ճարտարապետության հուշարձաններին նվիրված մատենաշարում), այնպես էլ իր «Հայ ճարտարապետության պատմության էջերից» գրքում (1973 թ.):

Տոկարսկու գիտական սխրանքների թվին պիտի դասվի Անիի հնագիտական արշավախմբի անդամ Գ. Ղիփշիձեի «Անիի քարայրները» գրքի հրատարակումը (1972 թ.): Հայտնի է, որ դրավաղամեծիկ երիտասարդ հեղինակը Ն. Մառի հատուկ առաջադրանքով հանգամանորեն հետազոտել էր այսպես կոչված «ստորգետնյա Անին», շափագրել և նկարագրել էր ժայռափոր բնակարանները, դամբարանները, եկեղեցիները, վանքերը և այլ շինությունները: Գիտությունը անծանոթ մնացած այդ հարուստ նյութերի մանրակրկիտ ուսուսնասիրության և սեփական հիշողությունների ու ֆոտոփաստաթղթերի օգնությամբ Տոկարսկուն հաջողվեց Անի քաղաքի վերաբերյալ գիտական գրականությունը հարստացնել ևս մեկ ծանրակշիռ հետազոտությամբ:

Լրիվ չի լինի անխոնջ գիտնականի բնութագիրը, եթե չնշենք նաև նրա վաստակը հայ ճարտարապետության պատմության ասպարեզում գիտական կարգերի պատրաստման բնագավառում:

Հայ ճարտարապետության անխոնջ հետազոտող Ն. Մ. Տոկարսկու գիտական վաստակն ըստ արժանվույն գնահատվեց: Նա պարգևատրվեց «Պատվո նշան» շքանշանով (1939 թ.) և մեդալներով, արժանացավ Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչմանը (1961 թ.), նրան առաջինը շնորհվեց Թ. Թորամանյանի անվան մրցանակը (1972 թ.):

Հայագիտության վաստակավոր գործչի, սովետական ականավոր գիտնականներ Ն. Մառի և Հ. Օրբելու գիտական դպրոցի կարկառուն ներկայացուցչի պայծառ հիշատակը իր բարի գործերի հետ միասին կապրի երկար տարիներ:

Ճարտարապետության դոկտոր
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ